ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/59

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Բողոք բերող՝ «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղ

Մասնակցությամբ՝
«ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացուցիչ՝ Ա. Մինասյանի
«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Հարությունյանի

Գնման Ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դարձիչ շարժիչ գեներատորի (ԴՇԳ-1; 2; 4; 5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ 4, 4Ա, 5, 5Ա) ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի

(այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 27.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին ընթացակարգի արդյունքնում ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,

- «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել,

- ընդունել որոշում՝ ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 27.04.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

20.05.2020թ.-ին և 27.05.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

20.05.2020թ.–ին՝ ներկայացված միջնորդության հիման վրա «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

Գործի քննությունն ավարտվել է 20.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 27.05.2020թ.-ին:

2. «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղը 27.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«20.04.2020թ.-ին կայացել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակար-գի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) հայտերի գնահատման նիստը: «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտ են ներկայացրել երկու մասնակիցներ՝ ԷԳՀԻ ՓԲԸ

«Էներգա-կարգաբերում» մասնաճյուղը և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն: Հանձնաժողովը մասնակիցների ներկայացրած հայտերը գնահատել է բավարար: Հանձնաժողովը կայացրել է որոշում բավարար գնահատված հայտերից Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին և վերջինիս հետ կնքել պայմանագիր: Սակայն «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում առկա է եղել «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) պահանջներին անհամապատասխանություն, այն է՝ Գնային առաջարկում լրացված չի եղել մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը: Հանձնաժողովը գնային առաջարկում առկա նշված անհամապատասխանությունը համարել է ոչ էական:

Գտնում ենք, որ գնային առաջարկը՝ որում բացակայում են մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը չի կարող համարվել Հրավերի պահանջներին բավարարող:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «հայտերի բացման և գնահատման հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի»: Հրավերի 1-ին մասի 8.2 կետով ևս սահմանված են Կարգով նախատեսված պահանջները՝. «հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի»: Հրավերի 1-ին մասի 8.9 կետով և Կարգի 41-րդ կետով գնային առաջարկում կարելի է շտկել միայն բացակայող էլեկտրոնային ստորագրության անհամապատասխանությունը: Հետևաբար Կարգով՝ օրենսդիրը և Հրավերով՝ Պատվիրատուն, սահմանել են, որ Հանձնաժողովը բոլոր դեպքերում պետք է մերժի այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամա-պատասխան, բացառությամբ էլեկտրոնային ստորագրության բացակայության, որի դեպքում անհամապատասխանությունը թույլատրվում է շտկել: Հատկանաշական է նաև, որ օրենսդիրը Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի ա.-զ. պարբերություններով մանրակրկիտ ձևով սահմանել է գնային առաջարկում բոլոր թույլատրելի շեղումները և վրիպակները, որոնց դեպքում հայտը առանց գնային առաջարկի շտկման կարող է համարվել բավարար: Թույլատրելի շեղումների և

վրիպակների ցանկում Կարգով նախատեսված չէ առանց մասնակցի անվանման և մասնակցի ղեկավարի անուն ազգանվան ու պաշտոնի նշման գնային առաջարկների բավարար համարումը: Նույն կարգավորումներն են բերված նաև Հրավերի 1-ին մասի 5.2 կետում: Փաստորեն Կարգով և Հրավերով միանշանակ սահմանված են, որ բացառությամբ էլեկտրոնային ստորագրության բացակայության անհամապատասխանության շտկման դեպքի, գնային առաջարկում անհամապատասխանությունների շտկում չի թույլատրվում, և եթե գնային առաջարկում առկա անհամապատասխանությունները ներառված չեն Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով կամ Հրավերի 1-ին մասի 5.2 կետով նշված-ներում, ապա հայտը՝ որի գնային առաջարկում կան նման անհամապատասխանու-թյուններ, Հանձնաժողովի կողմից մերժվում է:

Համաձայն բերված պարզաբանումների, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ կողմից գնային առաջարկում մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը նշած չլինելու փաստը Հանձնաժողովի կողմից ոչ էական համարելը և նման ձևով կազմված գնային առաջարկը Հրավերով սահմանված պահանջներին բավարար համարելը, հակասում է Կարգի 32-րդ, 40-րդ, 41-րդ կետերի և Հրավերի 1-ին մասի 5.2, 8.2, 8.9 կետերի պահանջներին: Բացի այդ գնային առաջարկն ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ հանդիսանում է անհատական իրավական ակտ: Նույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով «... նորմատիվ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նորմատիվ իրավական ակտերի գործողությունը դադարեցնելու, ժամկետների հաշվարկման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է անհատական և ներքին իրավական ակտերի վրա, եթե այլ բան սահմանված չէ օրենքով կամ այն նորմատիվ իրավական ակտով, որով նախատեսվել է անհատական կամ ներքին իրավական ակտի ընդունում»: Նույն օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով նորմատիվ իրավական ակտի «Պաշտոնական հրապարակումն իրականացվում է այն տեսքով, ինչ տեսքով դրանք ուղարկվել են հրապարակման: Այլ անձանց կամ մարմիններին արգելվում է կատարել լեզվաոճական, խմբագրական, շարադասական կամ այլ բնույթի փոփոխություններ իրավաստեղծ մարմնի՝ վերջնական խմբագրությամբ ընդունած նորմատիվ իրավական ակտում, բացառությամբ ուղղագրական կամ կետադրական սխալների ուղղման, որոնց ուղղման դեպքում տեքստի բովանդակությունը չի փոխվում»: Սույն մասի պահանջների խախտմամբ կատարված փոփոխություններն իրավաբանական ուժ չունեն: Հետևաբար Հանձնաժողովը բացի Կարգով և Հրավերով սահմանված պահանջներից, ընդհանուր առմամբ իրավասու էր բավարար համարել նաև «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ կողմից ներկայացված, տեքստի

բովանդակությունը չփոխող, ուղղագրական կամ կետադրական սխալներով գնային առաջարկը, եթե այդպիսիք լինեին: Իսկ գնային առաջարկում մասնակցի անվանումը, նրա ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը նշած չլինելը չի կարող համարվել ուղղագրական կամ կետադրական սխալ, բացի այդ դա ամբողջովին փոխում է գնային առաջարկի տեքստի բովանդակությունը: Հետևաբար անանուն և ոչ ներկայանալի կազմված գնային առաջարկը Հանձնաժողովի կողմից Հրավերի պահանջներին բավարար համարելու որոշումն իրավական հիմք չունի և այդ որոշումն ու նրանից բխող Հանձնաժողովի այլ որոշումները պետք է համապատասխանեցվեն օրենսդրության պահանջներին: Ըստ այդմ ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձին խնդրում ենք բավարարել սույն բողոքի 1-ին կետում նշված ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացրած պահանջները:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է՝ պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին ընթացակարգի արդյուքնում ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,

- «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել,

- ընդունել որոշում՝ ընթացակարգի արդյուքնում ընտրված մասնակից ճանաչել «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղին:

«Էներգակարգաբերում» մասնաճյուղը 04.05.2020թ.-ին ներկայացրած թիվ 24 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ծանոթանալով և ուսումնասիրելով 27.04.2020թ. ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքի վերաբերյալ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշմանը գտնում ենք, որ Բողոքում ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից նշված իրավական հիմքերի վերաբերյալ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն որևէ առարկություն կամ իրավական հակափաստարկ չի ներկայացրել: Դիրքորոշման մեջ, որպես ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշման իրավական հիմնավորում բերված միակ հղումը՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի և «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 5.2 կետի դրույթներին, մեր կարծիքով տեղին չէ, քանի որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկում առկա անհամապատասխանությունները նշված կետերով որպես վրիպակ կամ թերություն թույլատրված չեն, և այդ պատճառով հակասում են այդ կետերի

դրույթներին: Հետևաբար անհասկանալի է, թե ինչու է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն անդրադարձ կատարում դրանց և մանրամասն թվարկում, թե գնային առաջարկում, որ սխալների, թերությունների կամ վրիպակների դեպքում է առանց շտկման գնային առաջարկը համարվում բավարար: Միևնույնն է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկում առկա անհամապատասխանությունները Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերի 1-ին մասի 5.2 կետով թույլատրվածների շարքում չկան:

Ընդհանուր առմամբ վերլուծելով Բողոքի վերաբերյալ «ՀԱԷԿ» ՓԲԸ դիրքորոշումը, կարծում ենք, որ ըստ էության ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից Բողոքում բերված իրավական հիմքերի վերաբերյալ որևէ անհամաձայնություն նշված չէ: Դիրքորոշման մեջ նաև բացակայում են առարկություններ Բողոքով ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացրած պահանջների վերաբերյալ:»:

Ընկերությունը 21.05.2020թ.-ին ներկայացրած թիվ 26 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ծանոթանալով և ուսումնասիրելով ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ շարադրվածին, հարկ եմ համարում նշել, որ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ կառուցված է ելնելով այն վարկածից, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգի գնահատման հանձնաժողովը հանդիսանում է վարչական մարմին և պետք է առաջնորդվեր Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի դրույթներով: Կարծում եմ դա ճիշտ չէ, քանի որ Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ և միանշանակ է՝ «Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»:

ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի հղումները, որոնք վերաբերվում են ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին (ի դեպ նշված են մեջբերումներ կարգի այլևս չգործող նախավերջին ինկորպորացիայից) որևէ կերպ չեն անդրադառնում ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով բողոքաբերի՝ ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից նշված կոնկրետ և առարկայական խախտումներին և ըստ էության չի ներկայացվում որևէ հակափաստարկ:

ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի մնացած հղումները, որոնք վերաբերվում են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքին՝ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ շարադրված են նորից ելնելով վարկածից, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման

ընթացակարգի գնահատման հանձնաժողովը հանդիսանում է վարչական մարմին, և մեր կարծիքով ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքին հակադրելու համար կիրառելի չեն :

Ըստ բերված մեկնաբանությունների խնդրում եմ մերժել ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի 20.05.2020թ. ԱՌԱՐԿՈՒԹՅԱՆ պահանջը:»:

Ընկերությունը 23.05.2020թ.-ի ներկայացված թիվ 27 գրությամբ հավելել է նաև հետևյալը.

«Սույն գրությունը ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործելաձևը նկարագրող փաստի համադրությունն է օրենսդրության պահանջներին, որով ցանկանում եմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» գործելաոճում հանդիպող պատիականությունների գնահատողական վերլուծությանը, ի լրումն ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի ներկայացված իրավական հիմնավորումներին: Գրության նպատակն է վեր հանել և համադրել օրենսդրության արտաքուստ խիստ պահանջները և մասնակցի կողմից թույլ տրված խախտումները կապված հայտերում գնային առաջարկին ներկայցվող միանշանակ և աներկբա դրույթներին, որոնցով գրեթե հնարավորություն չի տրվում շտկելու գնային առաջարկում առկա անհամապատասխանությունները և մասնակիցների աշխատաոճի և գործելաձևի համար սահմանվում են ճշգրիտ և կոռեկտ գործողություններ, որոնցում տեղ չունեն ցանկացած պատահական թերացումները: Ստորև նշում եմ «Էներգակարգաբերումի» մեկնաբանությունները:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում բացակայում են մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը: Ընդ որում առկա է էլեկտրոնային ստորագրությունը, որի բացակայության դեպքում գնահատող հանձնաժողովը պարտավոր էր մասնակցին մեկ օրյա ժամկետում թույլ տալ շտկելու թերությունը, քանի որ օրենսդիրը նախատեսել է, որ էլեկտրոնային ստորագրության առկայությունը կարող է պայմանավորված լինել նաև մասնակի կամքից անկախ հանգամանքներով՝ այն առանց համացանցային էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքային համակարգի (Ekeng) չի կարող կիրառվել, հետևաբար հնարավորություն է ընձեռնել մասնակցի գնային առաջարկում էլեկտրոնային ստորագրության բացակայության դեպքում մասնակցին տալ հնարավորություն այն շտկելու համար: Սակայն օրենսդիրը գնային առաջարկին տալով կարևորագույն փաստաթղթի կարգավիճակ, չի նախատեսել որևէ այլ առկա անհամապատասխանության շտկում, որը կարող է պայմանավորված լինել մասնակցի կողմից սուբյեկտիվ գործոնով, այդ թվում նաև ինչ ինչ սուբյեկտիվ պատճառներով գնային

առաջարկի օրինակելի ձևը օրենսդրության պահանջներին չլրացնելը: Խիստ կարևոր եմ համարում, որ 20.05.2020թ.-ին ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքի քննարկման ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հարցին, թե ինչն է եղել պատճառը, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» գնային առաջարկում չեն լրացվել մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» ներկայացուցիչն ըստ էության ոչ մի համաչափ պատասխան չտվեց, որով հնարավոր կլիներ փաստերով ապացուցել, որ եղել են «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» կամքից անկախ օբյեկտիվ պատճառներ, որոնք թույլ չեն տվել պատշաճ ձևով լրացնել օրենսդրությամբ պահանջվող գնային առաջարկի օրինակելի ձևը:

Ցանկանում եմ անդրադարձ կատարել նաև 20.05.2020թ.-ին ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքի քննարկման ժամանակ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» ներկայացուցչի հնչեցրած արտա-հայտությանը, թե օրենսդրությամբ պահանջվող գնային առաջարկի օրինակելի ձևի լրացման թերությունը դա ոչ էական է, և գնահատող հանձնաժողովը որպես վարչական մարմին դրանով չէր կարող ծանրաբեռնել ընթացակարգի մասնակցին: Նախ գնահատող հանձնաժողովը ինչպես արդեն նշել էի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.05.2020թ.-ի գրությամբ, վարչական մարմին չէ: Ինչ վերաբերվում է գնային առաջարկում անհամապատասխանության էական կամ ոչ էական լինելուն առավել պատկերավորության համար բերում եմ հնարավոր և իրա-տեսական օրինակ, երբ որևէ ենթադրյալ Ընթացակարգին մասնակցի կողմից ներկայացվել է գնային առաջարկ, որի ընդհանուր գումարը ենթադրենք կազմել է 1,000,000,000.005 դրամ (մեկ միլիարդ դրամ հինգ տասնորդական լուսա), սակայն մասնակիցը հինգ տասնորդական լուսան կլորացրել է դեպի ներքև ամբողջ թիվը և ներկայացրել է 1,000,000,000.00 դրամ (մեկ միլիարդ դրամ): Այս դեպքում համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դ. պարբերության մասնակցի հայտը միանշանակ ենթակա է մերժման, քանի որ հինգ տասնորդական լուսայի կլորացումը կատարվել է դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ օրենսդրի պահանջով հինգ տասնորդական լուսան պետք է կլորացվեր դեպի վերև ամբողջ թիվը՝ այսինքն գնային առաջարկը պետք է լիներ 1,000,000,000.01 դրամ (մեկ միլիարդ մեկ լուսա): Բերված օրինակով, ուղղակի ցանկանում եմ ակնհայտ ցույց տալ, որ հնարավոր ահռելի մեծ գումարով գնային առաջարկում նույնիսկ ոչ համադրելի չնչին տասնորդական լուսաների (որոնք նույնիսկ ֆիզիկապես գոյություն չունեն) կլորացումը օրենսդիրը համարել է կարևոր և հատուկ կարգավորել է այն: Եվ հետևաբար առկա անհամապատասխանությունների տարանջատումը էականի կամ ոչ էականի պետք է

կատարվի միմիայն համապատասխան իրավական հիմնավորմամբ, այն ենթակա չէ միայն դատողական կամ տրամաբանական հետևանքների արդյուքում ստացված եզրահան-գումների: Ի վերջո նաև անուղղակի չափորոշիչ է, երբ օրենսդիրը մանրամասն և խստագույնս սահմանում է հայտի միակ փաստաթղթի՝ գնային առաջարկի գրեթե շտկման անհնարինության դրույթները, և մասնակիցը ներկայացնում է անանուն և ոչ ներկայանալի գնային առաջարկ:

«Էներգակարգաբերումի» կարծիքով այդ չափորոշիչը նման գնային առաջարկով «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍԻ» ՍՊ ընկերության հայտի մերժումն է, ըստ ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով ներկայացված իրավական հիմնավորումների:»:

3. «<u>Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.04.2020թ.-ին թիվ գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից 27.04.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել երկու մասնակիցներ՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն, 15999720 (տասնհինգ միլիոն ինը հարյուր ինսունինը հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ և ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգոկարգաբերում» մասնաճյուղը, 17170607 (տասնյոթ միլիոն հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամ գնային առաջարկներով:

Հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը նկատել է, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի էլեկտրոնային գնումների Armeps համակարգ մուտքագրած փաստաթղթերից՝ հավելված N 2 «գնային առաջարկ» ձևաթղթում լրացված չէ «մասնակցի անվանումը» և «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)» տողերը:

Վերը նշված բացթողումը քննարկվեց հայտերի բացման և գնահատման նիստում:

Ներկայացվեց, որ էլեկտրոնային գնումների Armeps համակարգ մուտքագրած «ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ հավելված N 1»-ում հստակ երևում է «մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)», ինչպես նաև հավելված N 1-ը և հավելված N 2-ը ստորագրված են «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ և դա գնահատող հանձնաժողովին հնարավորություն է տալիս նույնականացնելու այն փաստը, որ էլեկտրոնային գնումների Armeps համակարգ մուտքագրած գնային առաջարկ հավելված N 2-ը «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի «ՀԱԷԿ-ԳՀԱ.ՇՁԲ-6/20» ծածկագրով կազմակերպված ««ՀԱԷԿ» ՓԲԸ Գարձիչ Շարժիչ Գեներատորի (ԴՇԳ-1; 2; 4; 5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ 4, 4Ա, 5, 5Ա) ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգում, կարգաբերում և ստուգում» աշխատանքների գնման ընթացակարգի մասնակցության գնային առաջարկն է:

Գնահատող հանձնաժողովը արձանագրեց նաև այն փաստը, որ «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի գնային առաջարկում բացի գնման ընթացակարգի ծածկագրից և գնման առարկայի անունից, ճշգրիտ լրացված են նաև ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գինը թվերով և տառերով:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետի և գնման ընթացակարգի հրավերի «ՀԱՅՏԻ ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԸ» բաժնի 5.2 կետի պահանջներով, այն է՝

մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՝ տառերով, և՝ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով.

հանձնաժողովը որոշել է «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը գնահատել «բավարար» գնային առաջարկում կազմակերպության անվանումը և ղեկավարի անունը լրացված չլինելու փաստը համարել ոչ էական փաստ:

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով և քանի որ ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, հաշվի առնելով, որ «էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ներկայացրել է 15999720 (տասնհինգ միլիոն ինը հարյուր ինսունինը հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամ, իսկ ԷԳՀԻ ՓԲԸ «էներգոկարգաբերում» մասնաճյուղը՝ 17170607 (տասնյոթ միլիոն հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր յոթ) ՀՀ դրամ գնային առաջարկ, «էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ընտրված/հաղթող մասնակից ճանաչված «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն՝ 20.05.2020թ.–ին ներկայացրած միջնորդության հիման վրա ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ներկայանալով 20.05.2020թ.-ին հրավիրված նիստին, բանավոր և գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով հայտարարված բաց Ընթացակարգի 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան 20.04.2020թ. «ԷԿՐԱ

ԿՈՎԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հետայսու՝ նաև Ընկերություն) կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է բաց Ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն և գնային առաջարկ:

Ընկերության դիմում-հայտարարությունը և գնային առաջարկը ներկայացվել է որպես մեկ փաթեթ՝ միմյանց լրացնող փաստաթղթերի ամբողջություն, որոնցից մասնավորապես՝ դիմում առաջարկը ներկայացվել է 20.04.2020թ. ժամը 10:21-ին, իսկ գնային առաջարկը ներկայացվել է նույն օրը, ժամը 10:24-ին:

Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշվել է հայտատուի անվանումը, ղեկավար անձի անուն-ազգանունը, պաշտոնը, էլեկտրոնային ստորագրությունը:

Գնային առաջարկում լրացվել է հայտատուի էլեկտրոնային ստորագրությունը և ղեկավար անձի նույնացումը անուն-ազգանունով:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 15.999.720 ՀՀ դրամ:

«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով հայտարարված բաց Ընթացակարգի 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան 20.04.2020թ. դիմում հայտարարություն և գնային առաջարկ է ներկայացվել նաև ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից, որի արժեքը կազմել է 17.170.607 ՀՀ դրամ:

20.04.2020թ. կայացել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (հետայսու՝ նաև Հանձնաժողով) հայտերի գնահատման նիստը:

Հանձնաժողովվը ներկայացրրած հայտերը գնահատել է բավարար և որոշում է կայացրել՝ բավարար գնահատված հայտերից Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին և վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Որպես բաց Ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչելու հիմք և չափանիշ՝ հանձնաժողովը դիտարկել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկը:

27.04.2020թ. ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ներկայացվել է բողոք Հանձնաժողովի որոշումը ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգին հակասելու հիմնավորմամբ, որով խնդրել են ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձին՝ պարտավորեցնել Հանձնաժողովին՝

- *դադարեցնել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,*

- *«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի Ընթացակարգին ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել,*
- *ընդունել որոշում Ընթացակարգի մասնակից ճանաչել ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղին:*

Գտնում եմ, որ ներկայացված բոողոքն ակնհայտ անհիմն է և ենթակա է մերժման, որի կապակցությամբ ստորև ներկայացվում են հետևյալ իրավական հիմքերն ու հիմնավորումները.

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքի I և VII բաժինների գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) վարչական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ.

2) վարչարարություն՝ վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

Վկայակոչված հոդվածների համադրված վերլուծությունից բխում է, որ սույն գործով Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (հետայսու՝ նաև Հանձնաժողով) հանդիսանում է վարչական մարմին, ուստի որի գործունեությունն ի թիվս

այլոց կարգավորվում է նաև վարչարարության հիմունքները և վարչական վարույթը կարգավորող օրենքի նորմերով:

Քննարկվող բողոքի շրջանակներում բողոքաբերը գտնում է, որ վարչական մարմինը (Հանձնաժողովը) խախտել է ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 32-րդ, 40-րդ, 41-րդ կետերը և արդյունքում հանգել է սխալ հետևության՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին ճանաչելով ընթացակարգի ընտրված մասնակից: բողոքաբերի դիրքորոշումն այդ կապակցությամբ անհիմն է և հերքվում է հենց իր կողմից վկայակոչված Կարգի նորմերով, ինչպես նաև մի շարք այլ իրավական նորմերով, որոնց վերլուծությունը կտրվի ստորև:

Այսպես, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ նաև Կարգ) 32-րդ կետի համաձայն՝ Հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է՝…

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,

բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

գ. գնային առաջարկ,

թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Կարգի 32-թ. կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ

ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: ..

Ակնհայտ է, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկն ամբողջությամբ համապատասխանում է սահմանված Կարգի պահանջներին և անձնաժողովի կողմից իրավամբ գնահատվել է բավարար:

Կարգով հստակ կերպով սահմանված են այն դեպքերը, երբ Հանձնաժողովը մերժում է հայտերը և երբ կասցնում է նիստը՝ հայտնաբերված թերություններն ուղղելու նպատակով:

Այսպես, Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Նույն Կարգի 41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հետևաբար, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու դեպքում Հանձնաժողովը կխախտեր ոչ միայն Կարգով սահմանված, այլև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 9-րդ հոդվածները:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի» 5-րդ հոդվածի՝ Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Նույն օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հանգում ենք հետևության առ այն, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով հայտարարված բաց Ընթացակարգի ընթացքում «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերն ըստ էության համապատասխանում են պահանջվող կարգին և հայտերի ներկայացման համար սահմանված կանոններին, ուստի որևէ այլ պարտավորությամբ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին ծանրաբեռնելը վարչական մարմնի կողմից կպարունակեր վարչարարության սկզբունքների կոպիտ խախտում: Մասնավորապես, վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի իմաստով վարչարարության սկբունքներն են՝

1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով: (հոդված 4)

1. Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ: (հոդված 6)

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում: (հոդված 7)

Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: (հոդված 8)

Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար: (հոդված 10)

Ավելին, վարչական մարմինը կաշկանդված է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի իրավակարգարվորումներով, մասնավորապես՝

Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝1) գործում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը..

Նույն օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ 1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից,

իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար, վարչական մարմինը պարտավոր էր առաջնորդվել օրենքի պահանջով, ինչը և կատարել է:

Վերևում նշված իրավական նորմերի համադրված վերլուծությունից էլ պարզ է դառնում, որ գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէր հայտատու «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի նկատմամբ ցուցաբերել կամայական մոտեցում, ծանրաբեռնել Ընկերությանը այլևայլ պարտավորություններով, որոնք կրում են ձևական բնույթ և միանգամայն իրավացիորեն Ընթացակարգում բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընտրված մասնակից է ճանաչել այն ընկերությանը, ով համաձայն «Գնումների մասին» ՀՀ օենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ ներկայացրել է նվազագույն գնային առաջարկը:

Այսպիսով, վկայակոչված փաստերի և իրավական վերլուծությունների համատեքստում գտնում եմ, որ գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումն օրինական է և հիմնավորված, ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, ուստի՝ ղեկավարվելով «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ֆինանսների նախարարի 6 դեկտեմբերի 2018 թվականի N 600-Ն ՀՐԱՄԱՆՈՎ հաստատված ԿԱՐԳԻ իրավակարգավորումներով՝ խնդրում եմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի պատվերով «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով կազմակերպված ««ՀԱԷԿ» ՓԲԸ Դարձիչ Շարժիչ գեներատորի (ԴՇԳ-1-2-4-5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ4,4Ա, 5, 5Ա) ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգում, կարգաբերում և ստուգում» աշխատանքների գնման ընթացակարգերի վերաբերյալ ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից 27.04.2020թ. ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժել:»:

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն 26.05.2020թ.-ի ներկայացված գրությամբ հայտնել է նաև հետևյալը.

««ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով հայտարարված բաց Ընթացակարգի 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան 20.04.2020թ. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հետայսու՝ նաև

Ընկերություն) կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է բաց Ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն և գնային առաջարկ:

Ընկերության դիմում-հայտարարությունը և գնային առաջարկը ներկայացվել է որպես մեկ փաթեթ՝ միմյանց լրացնող փաստաթղթերի ամբողջություն, որոնցից մասնավորապես՝ դիմում առաջարկը ներկայացվել է 20.04.2020թ. ժամը 10:21-ին, իսկ գնային առաջարկը ներկայացվել է նույն օրը, ժամը 10:24-ին:

Ընկերության կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ նշվել է հայտատուի անվանումը, ղեկավար անձի անուն-ազգանունը, պաշտոնը, էլեկտրոնային ստորագրությունը:

Գնային առաջարկում լրացվել է հայտատուի էլեկտրոնային ստորագրությունը և ղեկավար անձի նույնացումը անուն-ազգանունով:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի գնային առաջարկը կազմել է 15.999.720 ՀՀ դրամ:

«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով հայտարարված բաց Ընթացակարգի 1 չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան 20.04.2020թ. դիմում հայտարարություն և գնային առաջարկ է ներկայացվել նաև ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից, որի արժեքը կազմել է 17.170.607 ՀՀ դրամ:

20.04.2020թ. կայացել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (հետայսու՝ նաև Հանձնաժողով) հայտերի գնահատման նիստը:

Հանձնաժողովվը ներկայացրած հայտերը գնահատել է բավարար և որոշում է կայացրել՝ բավարար գնահատված հայտերից Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին և վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Որպես բաց Ընթացակարգում ընտրված մասնակից ճանաչելու հիմք և չափանիշ՝ հանձնաժողովը դիտարկել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազագույն գնային առաջարկը:

27.04.2020թ. ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ներկայացվել է բողոք Հանձնաժողովի որոշումը ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգին հակասելու հիմնավորմամբ, որով խնդրել են ՀՀ գնումների հետ կապված բողոքները քննող անձին՝ պարտավորեցնել Հանձնաժողովին՝

- *դադարեցնել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,*

- *«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի Ընթացակարգին ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել,*
- *ընդունել որոշում Ընթացակարգի մասնակից ճանաչել ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղին:*

20.05.2020թ. կայացել է «ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքի քննարկումը:

Բողոքի քննությունը հայտարարվել է ավարտված և ՀՀ-ում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հեռացել է բողոքի կապակցությամբ որոշում կայացնելու նպատակով:

23.05.2020թ. ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ՀՀ-ում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղարկվել է «ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործելաոճի առերևույթ պատահականությունների մասին, որոնք ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կարծիքով կրում են բովանդակային և բնութագրիչ չափորոշիչներ» վերտառությամբ գրություն:

Գրության մեջ արտացոլված փաստերը չեն համապատասխանում օբյեկտիվ իրականությանը, ավելին, դրանում հնչեցվում են բողոքի քննության ընթացքում երրորդ անձի ներկայացուցչի կողմից հարցերի պատասխանների վերաբերյալ գնահատողական, ոչ օբյեկտիվ և ոչ պրոֆեսիոնալ կարծիքներ, ուստի գրության այդ հատվածի որևէ անդրադարձ չեմ կատարում:

Ինչ վերաբերվում է գրության մեջ երրորդ անձի գործունեության որակի և այդ կապակցությամբ ենթադրյալ առկա չափորոշիչների կապակցությամբ արտահայտված գնահատականներին և ներկայացված օրինակներին, ապա գտնում եմ, որ նշված գրությունը որևէ իրավական հիմք չունի, այն պարզապես հիմնավորված չէ որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույցով, ուստի բերված օրինակի փաստակազմը չի կարող նույնական լինել սույն գործով առկա իրավիճակի հետ, ուստի ներկայացված գրությունը և դրանում արտահայտված կարծիքը որևէ կողմնորոշիչ ազդեցություն չպետք է ունենան արդեն իսկ ավարտված քննության արդյունքների վրա:

Վերոգրյալի կապակցությամբ պնդում եմ իմ կողմից արդեն իսկ ներկայացված առարկությունների հիմնավորումները և խնդրում եմ 23.05.2020թ. ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից ՀՀ-ում գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղարկվել է «ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 բողոքով երրորդ անձի՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործելաոճի առերևույթ պատահականությունների մասին, որոնք ԷԳՀԻ ՓԲԸ «Էներգակարգաբերում» մասնաճյուղի

կարծիքով կրում են բովանդակային և բնութագրիչ չափորոշիչներ» վերտառությամբ գրությանը ընթացք չտալ:»:

5. <u>ԳԲՔԱ-LO-2020/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դարձիչ շարժիչ գեներատորի (ԴՇԳ-1; 2; 4; 5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ 4, 4Ա, 5, 5Ա) ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.04.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթքացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի թիվ 2 հավելվածով հաստատվել է գնային առաջարկը՝ հետևյալ ձևով.

Հավելված 2
«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է
մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	Աշխատանքի անվանումը	Ինքնարժեք /տառերով և թվերով/	Շահույթ /տառերով և թվերով/	ԱԱՀ** /տառերով և թվերով/	Ընդհանուր գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5*	*6=3+4+5*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>				
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>				
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>				
...	...				
...	...				

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղն և «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն:

«Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում լրացված չէ մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը: Մասնավորապես՝

Հավելված 2

«ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, _____-ն առաջարկում է

մասնակցի անվանումը

պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

Չափա-բաժինների համարները	**Աշխատանքի անվանումը**	**Ինքնարժեք /տառերով և թվերով/**	**Շահույթ /տառերով և թվերով/**	**ԱԱՀ** /տառերով և թվերով/**	**Ընդհանուր գինը /տառերով և թվերով/**
1	***2***	***3***	*4*	***5***	***6=3+4+5***
1	«ՀԱԷԿ» ՓԲԸ դարձիչ շարժիչ գեներատորների (ԴՇԳ- 1, 2, 4, 5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ)-4, 4Ա, 5, 5Ա ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգում, կարգաբերում և ստուգում N 1»	12 120 000 /տասներկու միլիոն մեկ հարյուր քսան հազար/	1 212 000 /մեկ միլիոն երկու հարյուր տասներկու հազար մեկ հարյուր/	2 666 620 /երկու միլիոն վեց հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր քսան/	15 999 720 /տասնհինգ միլիոն ինը հարյուր իննսունինը հազար յոթ հարյուր քսան/

_____ _____

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության.

- 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննարկել է «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում կազմակերպության անվանումը և ղեկավարի անունը լրացված չլինելու փաստը, մասնավորապես, «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունից հստակ երևում է ինչպես կազմակերպության անվանումը, այնպես էլ ղեկավարի անունը, ում կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են ընթացակարգի դիմում-հայտարարությունը և գնային առաջարկը:

Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում կազմակերպության անվանումը և ղեկավարի անունը լրացված չլինելու փաստը համարել ոչ էական փաստ և հայտը գնահատել «բավարար»:

7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ներկայացված գնահատման թերթիկները, փաստաթղթերի գնահատման արդյունքում «էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ճանաչել է ընտրված մասնակից և առաջարկվել է վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում 27.04.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից 27.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված,

դ. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին՝ դեպի վերև ամբողջ թիվը,

ե. գնային առաջարկի ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում գումարները լրացված են ինչպես թվերով, այնպես էլ տառերով, և դրանք համապատասխանում են միմյանց, իսկ ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարի մեջ լրացված են ավելորդ բառեր, որի արդյունքում ստացվում է գոյություն չունեցող թիվ: Ընդ որում սույն պարբերության մեջ նշված դեպքում գնահատող հանձնաժողովը հայտը գնահատելիս հիմք է ընդունում ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով լրացված գումարների հանրագումարը,

զ. գնային առաջարկի սյունակներում տառերով լրացված գումարների մեջ լումաները նշված են թվերով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի.

- 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված գնային առաջարկ,

- 8.2-րդ կետի համաձայն՝ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է

գնային առաջարկները կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի,

- 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, իսկ մնացած դեպքերում հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դարձիչ շարժիչ գեներատորի (ԴՇԳ-1; 2; 4; 5) տիրիստորային ընդհատիչների (ՏԸ 4, 4Ա, 5, 5Ա) ռելեային պաշտպանության և ավտոմատիկայի վերանորոգման, կարգաբերման և ստուգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.04.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2020 թվականի ապրիլի 13-ի թիվ 1 որոշմամբ հաստատված հրավերի թիվ 2 հավելվածով սահմանվել է գնային առաջարկը ձևը, որով ընթացակագրին մասնակցելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր մասնակից պետք է ի թիվս այլնի լրացներ մասնակցի անվանումը, ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը և ստորագրությունը:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում լրացված չէ մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը:

Հանձնաժողովի 20.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննարկել է «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում կազմակերպության անվանումը և ղեկավարի անունը լրացված չլինելու փաստը, մասնավորապես, «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունից հստակ երևում է ինչպես կազմակերպության անվանումը, այնպես էլ ղեկավարի անունը, ում կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված են ընթացակարգի դիմում-հայտարարությունը և գնային առաջարկը:

Նույն կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտի գնային առաջարկում կազմակերպության անվանումը և ղեկավարի անունը լրացված չլինելու փաստը համարել ոչ էական փաստ և հայտը գնահատել «բավարար»:

Արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ներկայացված գնահատման թերթիկները՝ փաստաթղթերի գնահատման արդյունքում «էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ճանաչել է ընտրված մասնակից և առաջարկվել է վերջինիս հետ կնքել պայմանագիր:

Պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում 27.04.2020թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում վերոնշյալ իրավական նորմերի

պահանջներին, քանի որ Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում լրացված չէ մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի կողմից դիրքորոշմամբ նշված այն հանգամանքին, որ բացի գնման ընթացակարգի ծածկագրից և գնման առարկայի անունից, ճշգրիտ լրացված են նաև ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գինը թվերով և տառերով, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնային առաջարկում գնման ընթացակարգի ծածկագիրը նախապես լրացվում է Հրավերով՝ հետևաբար այն լրացվել է ոչ թե Մասնակցի՝ այլ հրավերը հայտարարելիս լրացվել է Պատվիրատուի կողմից, իսկ միայն ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գինը թվերով և տառերով ճշգրիտ լրացնելը չի կարող բավարար հիմք հանդիսանալ Մասնակցի հայտը հրավերով սահմանված պայմաններին բավարար գնահատելու համար, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովի կողմից խախտվել է Օրենքի 34-րդ հոդվածով և Հրավերի 8.2-րդ կետով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձն անդրադառնալով «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի կողմից դիրքորոշմամբ ներկայացված այն հանգամանքին, որ Հանձնաժողովը պետք է առաջնորդվեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ վերջինիս կողմից ներկայացված դիրքորոշումը կառուցվել է վերը նշված օրեքի իրավական նորմերից, ապա Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ, հետևաբար սույն բողոքարկման ընթացակարգի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն:

Բացի այդ, Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ն ներկայացրած դիրքորոշմամբ հղում է արել ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի այլևս չգործող (նախկին խմբագրությամբ) կետերին, ուստի նման պայմաններում Բողոքներ քննող անձը չի անդրադառնում Երրորդ անձի կողմից վերը նշված իրավական նորմերին և դրանց իրավակարգավորումներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում մասնակցի անվանումը, մասնակցի ղեկավարի անուն ազգանունը և պաշտոնը չլրացնելը պետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող՝ շտկման ոչ ենթակա անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն իրավաչափ չէ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածի, Կարգի 32-րդ կետի 2-րդ և Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետերի, ինչպես նաև Հրավերի 8.2-րդ կետի խախտումներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղի կողմից 27.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/59 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-6/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ին ընթացակարգի արդյուքնում ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս հետ պայմանագիր կնքելու մասին որոշումը,

- «Էկրա Կովկաս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը գնահատել անբավարար և մերժել,

- ընդունել «ԷԳՀԻ» ՓԲԸ-ի «Էներգակարգաբերում» մասնաճյուղին ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**